



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union



© TEMPUS «ԱՐՄԵՆՔԱ» նախագիծ թիվ 543817-TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS-SMHEs

«ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒԾ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ»

## ԴԱՍԱԽՈՍՎԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ TRAINING OF THE ACADEMIC STAFF

### ԹԵՄԱ-1

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

### TOPIC -1

FORMULATING LEARNING OUTCOMES ON THE UNIT/COURSE LEVEL

24 Նոյեմբեր-16 Դեկտեմբեր,  
2016

ՏԵՍՊՈՒՄ ԱՐՄԵՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

1



## Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինչ է կրթական վերջնարդյունքը
2. Ինչ է տալիս կրթական վերջնարդյունքը (առավելություններ)
3. Բլումի տաքսոնոմիան (իմացության ձևերը)
4. Ինչպես ձևակերպել և գրել կրթական վերջնարդյունքներ
5. Գործնական օրինակների կատարում

24 Նոյեմբեր-16 Դեկտեմբեր,  
2016

ՏԵՍՊՈՒՄ ԱՐՄԵՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

2

## Դասընթացների և կրթական ծրագրերի մշակման մոտեցումները

### 1. Դասախոսակենտրոն մոտեցում (ավանդական)

- սկսվում է դասընթացի բովանդակության նկարագրությունից
- ինչ է անելու դասախոսը, ինչ է մատուցելու ?
- ինչպես են ուսանողները յուրացնելու մատուցված նյութը (բովանդակությունը) ?
- դասընթացի նկարագրություն՝ միայն բովանդակություն
- դժվար է հիմնավորված սահմանել, թե ինչ պետք է անի ուսանողը անցողիկ միավոր ստանալու համար (գնահատում)

## Դասընթացների և կրթական ծրագրերի մշակման մոտեցումները

### 2. Ուսանողակենտրոն մոտեցում (արդյունահեն)

- կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչ են կարողանալու անել ուսանողները դասընթացի ավարտին
- սահմանում է հստակ վերջնարդյունքներ, որոնք կարելի է չափել
- ինչ է անելու ուսանողը, ինչպես է սովորելու ակնկալվող արդյունքներին հասնելու համար ?
- արդյունքները դիտարկելի/դրսևորելի են – հիմնավորված գնահատում

## ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՄ - ՓՈԽՃԱՆԱՋՈՒՄ

**Կարևորագույն հարցը, որ պետք է տրվի ուսանողին  
կամ շրջանավարտին ոչ թե այն է, թե ինչ ես դու արել  
որակավորումը ստանալու համար, այլ՝ ինչ կարող ես  
անել որակավորումը ստանալուց հետո**

(Եվրոպայի խորհուրդ)

### Համահումչ Է՝

- աշխատանքի շուկային
- ցկյանս ուսումնառությանը
- Ոչ-ֆորմալ ճկուն ուսումնառության ձևերին

## ԻՆՉ Ե ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՄԸ

- ❑ ԿՎ-ՆԵՐԸ հստակ սահմանումներ են, թե ինչ պետք է իմանա և կարողանա անել ուսանողը ուսումնառության արդյունքում
- ❑ ԿՎ-ՆԵՐԸ սահմանում են, թե ինչ է ակնկալվում, որ ուսանողը կարողանա անել ուսումնառության գործընթացի արդյունքում
- ❑ ԿՎ-ՆԵՐԸ հստակ ձևակերպումներ են, թե ինչ ենք մենք ուզում, որ մեր ուսանողներն իմանան, հասկական կամ կարողանան անել դասընթացի ավարտին
- ❑ ԿՎ-ՆԵՐԸ ձևակերպումներ են, որոնք սահմանում են, թե ինչ կիմանան կամ կկարողանան անել սովորողներն ուսումնառության արդյունքում: Դրանք սովորաբար արտահայտվում են որպես գիտելիք, կարողություններ կամ հմտություններ
- ❑ ԿՎ-ՆԵՐԸ հստակ նկարագրություններ են, թե ինչ պետք է իմանա, հասկանա և ուսակ լինի անելու ուսանողն ուսումնառության արդյունքում
- ❑ ԿՎ-Ը ձևակերպում է, թե ինչ է ակնկալվում, որ սովորողը գիտենա, հասկանա և կարողանա անել ուսումնառության շրջանի ավարտին և ինչպես է այդ արդյունքը դրսենորվելու

## ԿՎ-ՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- Կրթական վերջնարդյունքները առավելապես կենտրոնանում են ուսանողի ուսումնական ձեռքբերումների, քան դասախոսի դասավանդման բովանդակության վրա
- Կրթական վերջնարդյունքները շեշտադրում են, թե հատկապես ինչ կարող է դրսևորել/ցուցաբերել ուսանողն ուսումնառության արդյունքում

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Կրթական վերջնարդյունքը գիտելիքի, կարողությունների և հմտությունների համակցություն է, որը ցույց է տալիս, թե ինչ կիմանա, կիասկանա և կլարողանա անել սովորողը ուսումնառության ավարտին  
(ՀՀ ԲՀՄԿ օրենք)

- ✓ պարզապես դասախոսի ցանկությունների թվարկում չէ
- ✓ ուսանողի կողմից ԿՎ-Ների դրսևորումը պետք է դիտարկելի լինի
- ✓ պետք է հնարավոր լինի դրանց արժանահավատ գնահատումը

## ԿՎ-ի սահմանումից տեսնում ենք.



Շեշտը դրվում է սովորողի և ոչ թե դասախոսի վրա  
Շեշտադրվում է սովորողի ինչ-որ բան անելու ուսակությունը

### Դասախոսակենտրոն ուսուցում




Դասավանդման շեշտադրում –  
նպատակներ և ինսդիրներ, գիտենայ,  
հասկանայ, ծանոթ լինել, տիրապետել  
և այլ տերմինների օգտագործում

24 Նոյեմբեր-16 Դեկտեմբեր,  
2016

ՏԵՍՊՈՒՄ ԱՐՄԵՆԻԱ Նախագիծ

### Ուսանողակենտրոն ուսուցում



Վերջնարդյունքներ – շեշտադրում են,  
թե ինչ ենք մենք ուզում, որ սովորողը  
ուսակ լինի անելու – որոշել, թվարկել,  
վերարտա-դրել, վերլուծել, հաշվարկել,  
նախագծել և այլ տերմինների օգտագործում

9



## ԿՎ-ի ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՏԱԿԻՑ

- ❑ Դասընթացի (կրթական ծրագրի) **նպատակը** լայն և ընդհանրական ձևակերպում է դասավանդման մտադրությունների մասին
- ❑ **Նպատակը** ցույց է տալիս, թե ինչ է պատրաստվում սովորեցնել դասախոսը դասընթացի (ծրագրի) շրջանակներում
- ❑ **Նպատակները** սովորաբար գրվում են դասախոսի տեսանկյունից՝ մատնանշելով դասընթացի ընդհանուր բովանդակությունը և/կամ ուղղվածությունը

Օրինակ.

1. **Ծանոթացնել ուսանողներին առոմային ֆիզիկայի հիմնադրույթներին  
և հիմնական օրենքներին**
2. **Տրամադրել ընդհանուր պատկերացում Եվրոպայի պատմության  
վերաբերյալ**

24 Նոյեմբեր-16 Դեկտեմբեր,  
2016

ՏԵՍՊՈՒՄ ԱՐՄԵՆԻԱ Նախագիծ

10

## ԿՎ-Ի ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԱԿԱՆԱԳԻՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ



- Կոմականագիրը սովորողի գիտելիքի և իմացության,  
կարողությունների, հմտությունների դրսևորումն է**
- Կրթական վերջնարդյունքը կոմականագիրի արտահայտման  
համակարգված և հստակ ձև է, որը հնարավորություն է տալիս չափել  
դրանց ճեղքերման/դրսևորման աստիճանը սովորողի մոտ**
- Կոմականագիրը գրվում են շատ ընդհանրական տեսքով**

Օրինակ.

1. *Օտար լեզվով հաղորդակցվելու հմտություն*
2. *Որոշումներ կայացնելու ուսակություն*
3. *Նախագծեր մշակելու և կառավարելու կարողություն*
4. *Տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու  
ուսակություն*

## ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ



### ԿՎ-ՆԵՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

- դասընթացի բովանդակությունը և կառուցվածքը
- դասավանդման ռազմավարությունը և մեթոդները
- ուսումնառության կազմակերպման ձևերը
- գնահատման չափանիշները և ձևերը
- ուսումնառության ռեսուրսները
- կրթական միջավայրը և այլն

### Ի ԻՄՔ ԵՆ ՍՏԵՂԾՈՒՄ ՆԱև ԴԱՍԸՆԹԱՑԻ/ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

## ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՔՆԵՐԻ ԱՌՎԿԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




- Ավելի հստակ պատկերացում են տալիս ուսանողների ակնկալվող ձեռքբերումների և դրանց դրսևորման ձևերի մասին
- Հնարավորություն են տալիս չափելու ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակը
- Ավելի հասկանայի և ընկալելի են ազգային և միջազգային մակարդակներում (*որպես ընդհանուր ֆարտարժույթ*)

## ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՔՆԵՐ ?



## ԲԵՆԻԱՄԻՆ ԲԼՈՒ (1913-1999)



- Նա դիտարկում էր ուսումնառությունը որպես պրոցես – մենք հենվում ենք մեր նախորդ ուսումնառության արդյունքների վրա՝ իմացության ավելի բարդ մակարդակներ զարգացնելու համար
- Դասակարգել է ուսումնառության գործընթացում իմացության դրսևորությունը ըստ մակարդակների
- Իմացության մակարդակներ - փաստերի պարզ վերարտադրությունից ստորին մակարդակում մինչև գնահատում՝ բարձրագույնում



## ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ԲԼՈՒԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՆ





- Ստեղծվել է 1956-ին
- Ուսումնառության գործընթացում իմացության մակարդակների հիերարխիկ դասակարգման եղանակ է
- Ունի 6 մակարդակներ ըստ աճող բարդության՝ սկսած փաստերի պարզ հիշողությունից ստորին մակարդակում, մինչև գնահատումը՝ բարձրագույնում
- Օգտակար գործիք է, որը կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար տրամադրում է պատրաստի կառուցվածքներ և բայերի ցանկ

## ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ԲԼՈՒՄԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԿԱՆ




Բլումը բացահայտեց, որ իմանալը ներառում է 6 հաջորդական մակարդակ-ներ՝ դասավորված որոշակի հիերարխիայով



## ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ԲԼՈՒՄԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԿԱՆ



- Բլումի տաքսոնոմիան ստեղծված է այսպես կոչված **իմացական** ոլորտի համար (“իմանալ” կամ “մտածել”)
- Չի վերաբերում զգայական և պսիխոմոտորային ոլորտներին
- Առաջարկում է որոշակի **բայերի ցանկեր**, որոնք բնութագրում են իմացական ոլորտի տարբեր մակարդակները դրսևորելու/ցուցաբերելու ունակությունը
- Այդ բայերի ցանկերը **կրթական վերջնարդյունացներ** գրելու բանալին են



## ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ ԲԼՈՒՄԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՆ



- Բլումի տաքսոնոմիան ստեղծված է այսպես կոչված **իմացական** ոլորտի համար ("իմանալ" կամ "մտածել")
- Չի** վերաբերում **զգայական** և **պսիխոմոտորային** ոլորտներին
- Առաջարկում է որոշակի **բայերի ցանկեր**, որոնք բնութագրում են իմացական ոլորտի տարբեր մակարդակները դրսևորելու/ցուցաբերելու ունակությունը
- Այդ բայերի ցանկերը **կրթական վերջնարդություններ** գրելու բանալին են



## ՕՐԻՆԱԿՆԵՐ - ԳԻՏԵԼԻՔ



- Թվարկել ռեֆլեքսների տեսակները ....
- Վերարտադրել դասական մեխանիկայի օրենքները ...
- Նկարագրել թոքախտի ախտանիշները .....
- Պատմել ինագույն կելտերի ծագումնաբանությունը ....
- Ներկայացնել ինժեներական նախագծման փուլերը .....
- Կրկնել Բուլյան հանրահաշվի օրենքները և աքսիոմաները ...



## 2. ԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ – ունեցած զիտելիքը հասկանալուն մեկնաբանելուունակություն



- Օգտագործել գործողության բայեր, ինչպես օրինակ.**
- ✓ պարզաբանել, բացատրել
- ✓ **մեկնաբանել**
- ✓ քննարկել, հիմնավորել, լուսաբանել
- ✓ ձևակերպել, սահմանել
- ✓ ընտրել, տարբերակել, դասակարգել
- ✓ մատնանշել, ճանաչել, առանձնացնել
- ✓ նկարագրել, ներկայացնել
- ✓ արտահայտել
- ✓ կանխատեսել, բացահայտել
- ✓ միավորել, փոփոխել, ձևափոխութել
- ✓ վերածնակերպել, վերանայել
- ✓ պաշտպանել
- ✓ ենթադրել և այլն


## ՕՐԻՆԱԿԱՆԵՐ - ԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ



- Տարբերակել քաղաքացիական և քրեական օրենքները ...
- Սահմանել էլեկտրոնային կոմերցիայի նպատակները և մասնակիցներին....
- Զննարկել մատերիայի ատոմային և ալիքային կառուցվածքները ...
- Ձևափոխել թվերի համակարգը տասնորդականից երկուականի և հակառակը ....
- Բացատրել 1-ին համաշխարհային պատերազմի սոցիալական, տնտեսական և քաղաքական ազդեցությունը .....
- Դասակարգել ռեակցիաները որպես իզոթերմիկ և Էնդոթերմիկ ...
- Մեկնաբանել հուսական և հոռմեական մշակույթի ազդեցությունը արևմտյան քաղաքակրթության վրա ...



### 3. ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ - գիտելիքը և իմացությունը նոր իրադրություններում կիրառելու և խնդիրներ լուծելու ունակություն



#### ❑ Օգտագործել գործողության բայեր, ինչպես օրինակ.

- ✓ Կիրառել օգտագործել գործածել
- ✓ Կատարել գործադրել, շահագործել
- ✓ գտնել, լուծել, հաշվարկել, գծել, գծագրել
- ✓ մշակել, կառուցել, տեղակայել
- ✓ գործնականում իրականացնել
- ✓ ստեղծել, արտադրել, փորձարկել
- ✓ ընտրել, (և ախսա)պատրաստել
- ✓ ձևափոխել փոխակերպել
- ✓ ցուցադրել, ցուցաբերել, լուսաբանել
- ✓ ստուգել, լրացնել, գեկուցել
- ✓ սովորեցնել, թարգմանել
- ✓ հայտնագործել, աշխատեցնել
- ✓ կազմակերպել և այլն

## ՕՐԻՆԱԿՆԵՐ - ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ



- Կիրառել գենետիկայի և գենոմիկայի մեթոդները կենսաբանության և բժշկության ոլորտներում ....
- Օգտագործել կլինիկական կենսաքիմիայի ժամանակակից մեթոդները և աշխատել համապատասխան սարքավորումների հետ ....
- Թարգմանել ժամանակակից արաբերենի կարճ տեքստեր ...
- Կատարել տարրեր կարգի քերականական կառուցվածքների երկարմանի փոխակերպումներ ...
- Գործածել հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ բառապաշարը, բառեզրերը և քերականական կազմությունները .....
- Հաջվարկել մեքենամասերի հոգևածային ամրությունը՝ վերջավոր էլեմենտների մեթոդի օգնությամբ ...
- Գործադրել լեզվական գիտելիքները և անգլերեն բանավոր և գրավոր խոսքի հմտությունները հաղորդակցման տարրեր ոլորտներում ...



## 4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ - տեղեկատվությունը բաղկացուցիչ մասերի՝ կամ իմաստների բաժանելու ունակություն՝ մասերի փոխհարաբերությունը կամ նշանակությունը հասկանալու նպատակով



### ❑ Օգտագործել գործողության բայեր, ինչպես օրինակ.

- ✓ Վերլուծել լուծել
- ✓ բացահայտել, որոշել
- ✓ տարրերակել, տարանջատել
- ✓ տրոհել, (մասերի) բաժանել, մասնատել
- ✓ հետազոտել, ընսել, զննել
- ✓ ընսարատել, բանավիճել, եզրահանգել
- ✓ փորձարկել, հաշվարկել, գնահատել
- ✓ դասավորել, դասակարգել
- ✓ հարցադրում անել
- ✓ հարաբերել, համեմատել
- ✓ համադրել, հակադրել
- ✓ լուսաբանել, ուրվագծել, մատնանշել
- ✓ Միացնել և այլն

## ՕՐԻՆԱԿՆԵՐ - ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Վերլուծել և համադրել Էլեկտրոնային բիզնեսի տարրեր մոդելները ...
- Ընսարկել Էներգիայի փոխակերպման պրոցեսների տևական և ընապահպանական ազդեցությունները ...
- Բացահայտել և հաշվարկել սխալանքի աղբյուրները չափումների գործընթացում ...
- Դասակարգել տարրեր ժանրերի և տարրեր ժամանակաշրջանների տեքստերի լայն շարք ...
- Վերլուծել և մեկնաբանել գերմանախոս երկրների քաղաքական կառուցվածքն ու տնտեսության ընորոշ գծերը ...
- Հետազոտել կառավարման հանգույցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում ...



## 5. ՍԻՆԹԵԶ - տեղեկատվությունը կամ փաստերը նորովի համատեղելու ուսակություն՝ (հիմնա)խնդրի ավելի լավ կամ համակողմանի ընկալման և նորի ստեղծման նպատակով



### Օգտագործել գործողության բայեր, ինչպես օրինակ.

- ✓ մտահղել, համարել, սինթեզել
- ✓ նախագծել, մշակել, ստեղծել, կազմել
- ✓ ստանալ, դուրս բերել, կառուցել
- ✓ միավորել, միացնել, վերածնակերպել
- ✓ պատրաստել, ձևակերպել, վերանայել
- ✓ հայտնագործել, առաջարկել
- ✓ ձևափոխել, վերափոխել
- ✓ հավաքել, համատեղել
- ✓ հարաբերել, կապ հաստատել
- ✓ կազմակերպել, համակարգել
- ✓ եղրակացնել, եղրահանգել, ամփոփել
- ✓ ընդհանրացնել, ի մի բերել
- ✓ ընսարկել, փաստարկել, մեկնաբանել
- ✓ դասակարգել, դասավորել և այլն

## ՕՐԻՆԱԿՆԵՐ - ՍԻՆԹԵԶ



- Առաջարկել լուծումներ բարդ Էներգետիկ համակարգերի կառավարման համար ...
- Մշակել ուսումնառության և դասավանդման նոր մոտեցումներ, որոնք արդյունավետ են տվյալ միջավայրում ....
- Ստանալ միջավայրի աղտոտիչների կենսաքայլայման և կենսաբանական վերականգնման նոր եղանակներ և կատարելագործել գոյություն ունեցողները ...
- Կառուցել արդյունավետ ալգորիթմներ կամ տվյալների բազաներ ....
- Ստեղծել ինտերակտիվ կայքեր և ցանցային կիրառություններ ....
- Սինթեզել նախապես տրված հատկություններով օրգանական միացություններ ...



## 6. ԳՆԱՀԱՏՈՒՄ - առկա տեղեկատվության հիման վրա դատողություններ/եզրահանգումներ անելու և դրանք գնահատելու ունակություն



### ▢ Օգտագործել գործողության բայեր, ինչպես օրինակ.

- ✓ արժեկորել, գնահատել, հարաբերել
- ✓ համեմատել, համադրել, հակադրել
- ✓ ընտրել, դասակարգել, դասավորել
- ✓ տարբերակել, մեկնաբանել, դատել
- ✓ չափել, հաշվել
- ✓ պարզել, բացահայտել, լուծել
- ✓ օժանդակել, աջակցել
- ✓ քննադատել, քննարկել, վերանայել
- ✓ դրոշել, կանխատեսել
- ✓ ապացուցել, ընդհանրացնել
- ✓ եզրահանգել, հետևողուններ անել
- ✓ ենթադրել, երաշխավորել, արտոնել
- ✓ բացատրել, պաշտպանել և այլն

## ՕՐԻՆԱԿՆԵՐ - ԳՆԱՀԱՏՈՒՄ



- Համադրել դեղերի արդյունավետությունը, գնահատել դրանց կողմանակի ազդեցությունները և բացասական դրսեւորումները ...
- Համեմատել մարդեթինգային ռազմավարությունները Ելեկտրոնային բիզնեսի տարրեր մոդելների համար ...
- Վրժեկորել սպորտի և ֆիզիաստիարակության դերակատարությունը՝ երիտասարդ սերնդի առողջության ամրապնդման գործում ...
- Չափել գլոբալ տաքացման ազդեցությունը քննության հավասարակշռության վրա ...
- Գնահատել ԵՄ մշակութային ինտեգրմանը միտված ռազմավարությունները և նախագծերը ....
- Ի մի բերել Ս. Ֆարանդյանի հիմնական ներդրումը Ելեկտրամագնիսական ինդուկցիայի բնագավառում ...



## ԿՎ-ՆԵՐԻ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- Գործողության բայ, որը մատնանշում է **ԿՎ-ի տեսակը՝ գիտելիք և իմացություն, դրանց կիրառությունը, կարողություններ (վերլուծելու, գնահատելու, սինթեզելու), հմտություններ և այլն**
- ԿՎ-ի թեմատիկ **ոլորտը** - կարող է լինել խիստ կոնկրետ կամ ընդհանուր և վերաբերվել որոշակի բնագավառի, առարկայի, գիտելիքի ներ բնագավառի կամ կոնկրետ կարողությունների
- ԿՎ-ի ձեռքբերման ակնկալվող **մակարդակը**, չափը, ծավալը և այլն
- ԿՎ-ի տիրույթը, շրջանակը և/կամ համատեքստը



## ՊԱՏՇԱճ ԿՎ-ի ՕՐԻՆԱԿ-1 (ԳԻՏԵԼԻՔ)



Ակտիվ/գործողության բայ (տեսակը)	Թեմանական /առարկան	Սակարդակը /չափը	Տիրույթը /համատեքստը
Վերարտադրելու (գիտելիք)	քաղաքական նյութերի բովանդակությունը	ընդհանուր գծերով	հայկական մամուլից վերցված քաղաքական նյութերի բովանդակությունը

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ընդհանուր գծերով վերարտադրելու հայկական մամուլից վերցված քաղաքական նյութերի բովանդակությունը

## ՊԱՏՇԱՋ ԿՎ-Ի ՕՐԻՆԱԿ-2 (ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ)

Ակտիվ/գործողության բայ (տեսակը)	Թեման /առարկան	Մակարդակը /չափը	Տիրույթը /համատեքստը
Նկարագրելու (իմացություն)	առանձին ֆիզիոլոգիական ֆունկցիաները և դրանց կարգավորման մեխանիզմները	համակարգված կերպով	մարդու օրգանիզմի



Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

համակարգված կերպով նկարագրելու (բացատրելու) մարդու օրգանիզմի առանձին ֆիզիոլոգիական ֆունկցիաները և դրանց կարգավորման մեխանիզմները

## ՊԱՏՇԱՋ ԿՎ-Ի ՕՐԻՆԱԿ-3 (ԿԻՐԱՑՈՒԹՅՈՒՆ)

Ակտիվ/գործողության բայ (տեսակը)	Թեման /առարկան	Մակարդակը /չափը	Տիրույթը /համատեքստը
Գործածելու (կիրառություն)	բառապաշարը, բառեզրերը և քերականական կազմությունները	ճշգրտորեն	հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ճշգրտորեն գործածելու հաղորդակցման առանձին ոլորտներին բնորոշ բառապաշարը, բառեզրերը և քերականական կազմությունները



## ՊԱՏՇԱճ ԿՎ-Ի ՕՐԻՆԱԿ-4 (ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)



Ակտիվ/գործողության բայ (տեսակը)	Թեման /առարկան	Մակարդակը /չափը	Տիրույթը /համատեքստը
Վերլուծելու (Վերլուծություն)	Կառավարման հանգուցային խնդիրները	համակողմանիորեն	կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

համակողմանիորեն վերլուծելու կառավարման հանգուցային խնդիրները կոնկրետ արտադրության կամ ընկերության դեպքում

## ՊԱՏՇԱՃ ԿՎ-Ի ՕՐԻՆԱԿ-5 (ՍԻՆԹԵԶ)



Ակտիվ/գործողության բայ (տեսակը)	Թեման /առարկան	Մակարդակը /չափը	Տիրույթը /համատեքստը
Նախագծելու (սինթեզ)	թվային կառավարմամբ հաստոցներ	սահմանված բնութագրերով	թեթև արդյունաբերույան ոլորտի ձեռնարկությունների համար

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

նախագծելու սահմանված բնութագրերով թվային կառավարմամբ հաստոցներ՝ թեթև արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների համար

## ՊԱՏՇԱԾ ԿՎ-Ի ՕՐԻՆԱԿ-6 (ԳՆԱՔԱՏՈՒՄ)

Ակտիվ/գործողության բայ (տեսակը)	Թեման /առարկան	Մակարդակը /չափը	Տիրույթը /համատեքստը
Համեմատելու , գնահատելու (գնահատում)	ռազմավարական հնարավորությունները	քննադատորեն	ձեռնարկությունների

Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝

համեմատելու և քննադատորեն գնահատելու ձեռնարկությունների առկա ռազմավարական հնարավորությունները:



### ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԿՎ-ՆԵՐ - 1 ?



- Սկսել՝ օգտագործելով **§Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի!** արտահայտությունը, այնուհետև թվարկել ԿՎ-ների ցանկը
- Գրել ապառնի ժամանակով
- Սկսել գործողության (ակտիվ) **բայից**, քանի որ ԿՎ-ը նկարագրում է դրսևորելի, ցուցաբերելի, դիտարկելի, ակնառու գործողություն կամ վարք
- Բայից հետո գրել նրա **լրացումը**, այնուհետև տալ **համատեքստը**
- Յուրաքանչյուր ԿՎ-ի նկարագրման համար օգտագործել մեկ նախադասություն՝ միայն **1 բայով**



## ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԿՎ-ՆԵՐ - 1 ?



- Սկսել՝ օգտագործելով «Դասընթացի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի» արտահայտությունը այնուհետև թվարկել ԿՎ ների ցանկը
- Գրել ապառնի ժամանակով
- Սկսել գործողության (ակտիվ) բայից, քանի որ ԿՎ-ը նկարագրում է դրսևորելի, ցուցաբերելի, դիտարկելի, ակնառու գործողություն կամ վարք
- Բայից հետո գրել նրա լրացումը, այնուհետև տալ համատեքստը
- Յուրաքանչյուր ԿՎ-ի նկարագրման համար օգտագործել մեկ նախադասություն՝ միայն **1 բայով**



## ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԿՎ-ՆԵՐ - 2 ?



- **Խուսափեք որոշ բայերից**, ինչպես օրինակ՝ իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ/ծանոթ լինել, հասկանալ, ընկալել, ըմբռնել, տիրապետել և այլն, քանի որ դրանց դրսևորման և գնահատման եղանակներն անորոշ են
- Գրեք ուսանողի համար **մատչելի լեզվով**, կիրառեք նրա համար առավել ընկալելի խոսք
- Կենտրոնացեք այն բանի վրա, թե ինչ եք դուք **ակնկալում**, որ ձեր ուսանողները դրսևորեն դասընթացի/ծրագրի ավարտին
- ԿՎ-ՆԵՐԸ պետք է սահմանել/ծռակերպել **ՆՎԱԶՎԱԳՈՒՅՆ ՉԵՄԱՅԻՆ** մակարդակում, ինչը թույլ կտա բոլոր ուսանողներին հասնելու դրանց



## ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԿՎ-ՆԵՐ - 3 ?



- Խուսափել **բարդ** նախադասություններից, բացահիկ դեպքում օգտագործել մեկից ավելի նախադասություններ՝ հստակություն ապահովելու համար
- ԿՎ-ՆԵՐԻ թիվը պահել հեշտ կառավարելի սահմաններում, յուրաքանչյուր դասընթացի համար սահմանեք **4-8 ԿՎ** (2 կրեդիտ՝ 4ԿՎ, 6 կրեդիտ՝ 8ԿՎ)
- Համոզվեք, որ ԿՎ-ՆԵՐԸ դիտարկելի, **չափելի և գնահատելի** են (ինչպես եք իմանալու ուսանողը ծեռք է բերել այդ վերջնարդյունքը, թե ոչ)
- Հիշեք, եթե ԿՎ-ՆԵՐԸ ձևակերպված են շատ ընդհանուր գծերով՝ դժվարանում է դրանց **գնահատումը**, եթե ԿՎ-ՆԵՐԸ շատ մանրատված են՝ մեծանում է դրանց **թիվը**



## ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԿՎ-ՆԵՐ - 4 ?



- ԿՎ-ՆԵՐԻ ցանկում ներառեք Բլումի տարսունմիայի ոչ միայն **ստորին** (1-3), այլ նաև՝ **վերին** (4-6) մակարդակների հմացության ձևերը
- Եղեք **իրատես**՝ հաշվի առնելով ուսանողի գիտելիքների մակարդակը, առկա ժամանակը և ուսումնառության ռեսուրսները
- Համոզվեք, որ ԿՎ-ՆԵՐԸ **համահունչ են** դասընթացի նպատակին, բովանդակությանը և շաղկապված են ծրագրի ԿՎ-ՆԵՐԻ հետ
- Վերջում, ձեր գրած ԿՎ-ՆԵՐԻ ցանկը տվեք ձեր **կոլեգաներին և ուսանողներին**, համոզվեք, որ ԿՎ-ՆԵՐԸ նրանց համար հասկանալի են

## ԱՅՍ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԴՈՒՔ ԿԿԱՐՈՂԱՆԱՔ.



1. Նկարագրել,թե ինչ է կրթական վերջնարդյունքը
2. Բացատրել իմացության ձևերի դասակարգման Բլումի տաքսոնոմիան
3. Կիրառել Բլումի տաքսոնոմիան ԿՎ-ներ գրելիս
4. Զետակերպել պատշաճ և հստակ ԿՎ-ներ դասընթացի համար
5. Թվարկել ԿՎ-ների օգտագործման առավելությունները



ԾՆՈՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒԾՎԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՐ !

ՀԱՐՑԵՐ ?